ՆՈՐ-ԴԱՐ

№ 208 ԵՐՈՒՐԲ ՏԱՐԻ Ուրբաթ 5 Դեկտեմբերի 1886 Ուրբաթ 5 Դեկտեմբերի ԵՐՈՒՐԲ ՏԱՐԻ № 208

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ.
Հատուկ 5 կոպէկ։
Բաժանորդ ղրկում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բաւին 2 կ., ընկալիների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Բ ր ո ն ի կ ո ն.—Լուրեր։ Մի առաջարկութիւն։

Ք ա ղ ա ք ա կ ա ն. — Լուրեր։

Խ ա ռ ն լ ու ր ե ր։

«Նոր-Դար»-ի հեռագիրները։

Յ այ տ ա ր ա ր ու թ իւ ն ն ե ր։

ՔՐՈՆԻԿՈՆ

Մի խնդիր, որ Թիֆլիսին է վերաբերում և մեր քաղաքի հասարակութեան զբաղեցնում է, դա քաղաքային խորհրդի վերջերումս կատարուած ընտրութիւններն են։

Տեղական մամուլի մէջ այդ առթիւ լոյս են տեսնում թէր և դէմ գրուածքներ, խմբագրական յօդուածներ։

Մենք այդ վէճից հեռու ենք մնում, ոչ թէ միայն նրա համար, որ դա մի որոշ քաղաքի չահերին է վերաբերում, այլ նրա համար, որ քաղաքային խորհրդի ընտրութիւնների և ընդհանրապէս քաղաքային ինքնավարութեան գործերի մասին այժմ լրագրական խորհրդածութիւնները միմիայն տեսական, ակադեմիկական նշանակութիւն կարող են ունենալ։

Ինչումն է վէճը։ քաղաքի գործերին զլուխ կանգնած կուսակցութեան դէմ կռւում է դիմադիր կուսակցութիւնը, որ կամենում է նրա տեղը բռնել։ Ի հարկէ գործի գլուխ կանգնած կուսակցութիւնը ամեններին ցանկութիւն չունի զիջանել և իւր ձեռքի իշխանութիւնը յանձնել դիմադիր կուսակցութեան։

Գանի որ քաղաքիս բնակիչները այնքան զարգացած չեն, այնքան պատրաստուած չեն, որ քաղաքի, հասարակաց չահերի պաշտպան կանգնեն և դիտակցութեամբ, եռանդով մասնակցեն քաղաքային ընտրութեան գործերին, քանի որ քաղաքի բնակիչների մեծամասնութիւնը արդէն իւր քաղաքացիական պարտաւորութիւնը կատարած է համարում, երբ իւր վերայ դրած քաղաքային հարկերը վճարում է, և այդպիսով քաղաքիս գործերը և չահերը մի չնչին փոքրամասնութեան, կարելի է ասել մի խմբակի ձեռքումն է, այնուհետև ինչ ասել կուզէ, որ քաղաքի բնակիչների համար միևնոյն է թէ այդ խմբակի ձեռ կուսակցութիւնն է քաղաքս բաղդաւորացնում քաղաքի փողերով և վայելում քաղաքային գործերի կառավարութիւնը։

Աւելի քան թէ հասկանալի է, որ այժմեան քաղաքային վարչութեան գլուխը և անդամները վերընտրուելով՝ կը չարունակեն իրենց գործը։

—

Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ Ի Ց։—Անցեալներում նորաւարտ համալսարանական երիտասարդ Ս. Տ-Գ-ի լիճ ընկնելը մեծ ազդեցութիւն թողեց վազարշապատցիների վերայ։ Այսպէս օրինակ, երիտասարդները հենց որ բարկանում են թէ չէ, ծնողներին վախեցնելու համար ասում են՝ «կերթամ, լիճը կընկնեմ, տես», իսկ ծնողները չեն ուզում ասում տալ (ի հարկէ բարձրագոյն ուսում) իրենց զաւակներին ասելով. «Մեծ ուսում ստացողները գժվում են», և կամ թէ ծնողները իրենց որդուը ասում են. «Չա, ուղարկեմ, փող ծախսեմ, վերջին կոպէկս էլ քեզ տամ ուտես, ուսում տամ, որ գնաս լիճը ընկնես, գնա, գնա»։

—

Բ Ա Գ Ո Ի Ի Ց։—Անցեալ նոյեմբեր ամսում արտահանուած է Պարսկաստան նաւթ 50.300 պուդ, կերոսին 28,506 պուդ, նաւթի մնացորդ 21,000 պուդ։

Նոյն նոյեմբեր ամսում Բալախանում փորուած ու վերջացրած են 15 հատ նոր նաւթահորեր, որոնք լիքն են նաւթով։

—

Ա Ս Խ Ա Բ Ա Դ Ի Ց։—Անդրկասպեան երկրների կառավարութիւնը պաշտօնապէս հրամանագրել է Անդրկասպեան երկրների բոլոր կառավարութիւններին, որ սրանք իրենց բոլոր հարկատոր տեարները, բլանկները, յայտարարութիւնները և այլն, պատուէր տան կօլեժսկի ասեսոր պարոն Պալտարանովի տպարանին, որ բացուած է Ախալքալաքում, ինչպէս երևում է հրամանագրից, այդ տպարանը առանձնապէս բաց է արուած յատուկ տեղիս չտաբի համար, սրա իսկզբանէ որ ի հարկէ մեծ հետաքրքիր է պատճառում սրան և սրա պաշտօնատարներին, Պարոն Պալտարանովը այդ տպարանի վերայ մսխել է, ինչպէս ասում են, 36 հազար րուբլի արծաթ։ Կառավարութեան հրամանագրի մէջ ցոյց էր տրուած, որ տպարանը նա ևս ունի կազմարարի, լիտոգրաֆի և կանցելեարիայի ամեն պիտոյքների թանաք, թուղթ, գրիչ և այլն և այլն իրեր, որոնք վաճառվում են այն գներով, ինչ գներով որ վաճառվում են այլ տեղերում, օրինակ Բաքուում և Պետերբուրգում։

—

Ցայտնի է, որ անտառները ահագին նշանակութիւն ունին երկրի օդի բարեխառնութեան, անձրևների առատութեան, հողի պարարտութեան վերայ։ բայց միւս կողմից էլ, յայտնի է թէ որքան անխնայ կտրատվում են մեզանում անտառները... Պատմութեան մէջ երբ կարդում ենք այս կամ այն երկրի, օրինակ՝ Արարատեան աշխարհի ճոխ բնական հարստութեան մասին, մարդ զարմացած է մնում, թէ մթեթէ ճշմարիտ այս Արարատեան աշխարհի մասին է խօսքը— որ այժմ համարեա անօգտակար է չատ տեղ և օդը կիզիչ, ջուրը—նուազ։ Սակայն պատմութեան մէջ չիչվում են այդ աշխարհի անտառների մասին էլ, որոնց հետքն անգամ չկայ այժմ, և գաղտնիքը պարզվում է մեզ համար... Մինչև վերջի ժամանակներս ժողովուրդը առանց հասկանալու անտառի նշանակութիւնը և մանաւանդ վարելահողերն էլ քիչ գալով, նա սկսում է անխնայ կտրատել անտառը, առանց մտածելու, որ դրանով թէև աւելանում է իւր հողը, սակայն նրա այժը, զօրութիւնը պակասում է։ Սակայն միայն երկրագործ, տգէտ գիւղացին չէ, որ ոչնչացնում է անտառը, այդ բանը աւելի սաստիկ, և մեծ տարածութեամբ կատարում են այս կամ այն հանքերի մօտ գտնուող գանազան գործարանները, երկաթուղու և նաւամատոյց գետերի վերայի չոգենաւային ընկերութիւնները և այլն և այլն։ Սակայն չնայելով այս ամենին, շատ քիչ հետաքրքրութիւն է կատարուել այդ մասում և շատ քիչ միջոցներ են ձեռնարկուել այդ ուղղութեամբ, դրանց առաջն առնելու համար։ Վերջի ժամանակներս այս հարցերը, ինչպէս երևում է մայրաքաղաքի թերթերից, զարթեցրել են «Աչխարհագրական ընկերութեան մէջ», որը կարծես քնից զարթած, տեսնելով որ մինչև այժմ Ռուսիայում ոչ մի փորձ չի եղել անտառների պահպանելով երկրի կրելիք փոփոխութիւնները գուշակելու, ուստիևնպաստելու վերաբերմամբ, իսկոյն վճռել է արևմտա-հարաւային Ռուսիայում, կօրօսաբշիվ գիւղում մի քանի օդերևութաբանական կայարաններ չինելու, անտառի մէջ և անտառից դուրս փորձերի համար ընտրում են Ռուսիայի արևմտեան-հարաւային կողմը այն պատճառով, որ այդ հողերը անտառային լինելով և երկաթուղու գծերն էլ աւելի շատ, կարելի կլինի հեշտութեամբ տեսնել, գնալ, թէ անտառի արագ պակասելը (որ երկաթուղու համար է գործածվում) ինչ փոփոխութիւն է առաջացնում երկրի օդի բարեխառնութեան և գիւղատնտեսութեան վերաբերմամբ։

Ի՛նչ ասել կուզէ, որ այդ փորձերը բացի այն՝ որ մեծ նշանակութիւն ունին գիտութեան համար, աւելի ևս մեծ նշանակութիւն ունին պրակտիկական տեսակէտից անտառոտ երկրների, օրեցին և Կովկասի համար։

—

Դ Ո Ւ Մ Ա Ն Ե Ի Ս Ի Ց։—Այս օրերս այստեղ տեղի ունեցաւ մի սարսափելի դէպք։ Մի հովիւ ցերեկը հանդում հօթը արածացնելուց յետոյ, երբ երեկոյեան կաչառիի ձայնով պատրաստվում է գիւղ վերադառնալու, յանկարծ բօրչալուի աւազակները դարանամուտ լինելով չրջակայ լեռներից միևի հետևում, յարձակվում են խեղճ ծերունի հովիւի վերայ և գընդակահար՝ անելով վիրաւոր գլորում են գետին, իսկ հօտը առաջն անելով անհետանում են անմիջապէս։ Ծերուկ հովիւը երեք ժամ տանջուելուց յետոյ աւանդում է հոգին։ Մինչև այժմ դեռ յայտնուած չէ այդ աւազակների խումբը։

—

Լ Ե Զ Մ Ի Ա Ն Ց Ի Ի Ց։— Որոշուած է, որ այստեղի ճեմարանից աւարտող ուսանողները պարտաւորուին լրացնելում մնացած իւրաքանչիւր տարուայ փոխարէն $1^1/_2$ տարի ծառայելու նշանակուած տեղում։ Այսպէս ուսանողները 3 տարի լրացնում մնալով $4^1/_2$ տարի պարտաւոր կը լինին չափաւոր առճիվ ուսուցչութիւն անելու։ Մեր կարծիքով այս շատ լաւ գործ է. իրաւ, մթեթէ իրաւունք է 8—9 տարի ձրի հաց ուտելուց և ուսում ստանալուց յետոյ, գնալ ըստ հանճոյից ապրել առանց երախտահատոյց լինելու։ Դուք կը տեսնէք այս ու այն գիւղից եկած քաղցած տղան իւր իրաւունքն է համարում այստեղ ձրի ապրելու, աւելով «ես աղդի հաշն եմ ուտում»... Մեր կարծիքով ճեմարանի աշակերտները շատ երախտապարտ են ու Լեզմիածնին։ երախտապարտ են մըննացել մանաւանդ հետզհետէ աւարտած տասնեակները, որոնց թիւը հասնում է մօտ 30-ի։

—

Ն Ո Յ Ե Ն Տ Ե Ղ Ի Ց։—Հեմարանի աւագ վերակացուն կը լինի Յովհաննէս սարկաւագ Տէր-Գրիգորեանցը։

—

Ղ Ա Զ Ա Խ Ի Ց մեզ գրում են.—Պարոնայք Ս. Ամիր., Ս. Յար., Աբել Ապր. և ուրիշներ մտադիր են չուտով մի ներկայացումն տալու յօգուտ Ղազախի Նորաչէն եկեղեցու կը խաղան «երեք քաջեր» և «Կռիւ-կռիւ» պիեսաները։ Տեղիս արժ. հայր Աբգարիոս Տէր Յարութեանի անխոնջ աշխատութեամբ արդէն Ղազախի եկեղեցու պատերը բոլորովին աւարտուած են, սակայն տանիքը ծածկելու համար հարկաւոր է առնուազն 300—500 րուբլի։ Եթէ Ղազախում լինէին չատ հարուստ հայեր, գուցէ կարելի լինէր նրանց օժանդակութեամբը գլուխ բերել այդ բարեպաշտակ գործը, բայց որովհետև Ղազախը քաղաք է ճանաչուած երեք տարի սրանից առաջ, և այդ ժամանակամիջոցում եկած գաղթականների մեծ մասը գրեթէ աղքատ արհեստաւորներ են, այդ պատճառով Ղազախում գտնուող հայերի մեկ աղօթատունը մնացել է աննպաստ։ Անցեալ տարի Բագուից յարգ. տիկին Մարգարիտ Իւզբաշեանը մի քանի օրուայ մէջ երեք հարիւր րուբլի ժողովելով բարեհաճել էր հասցնել Տէր-Աբգարիոսին, ինչքան ուրախալի կը լինէր, եթէ միւս քաղաքների բարեսիրտ տիկիններս ևս հետևէին յարգելի Մարգարիտ Իւզբաշեանին, Թէպէտ Ղազախում կան մի քանի հարուստ ազգներ, որոնք եթէ կամենային, կարող էին հեշտութեամբ հասցնել իրենց օգնութիւնը մեր կիսաչէն եկեղեցուն, բայց դրանք խօսում են միայն, իսկ օգնութեան ժամանակ մեծ քար է ընկնում մէջքներին և իսկոյն անհետանում են ասպարէզից։ Ղազախի հայ հասարակութեան—այդ խեղճ գաղթականների միակ յոյսը Կովկասի և Անդրկովկասի քաղաքների հայ հասարակութիւնների վերայ է, որոնցից և ապասվում է եկեղեցու աւարտման համար նպաստ։ Թող ամեն մի հայ անուն կրող անհատը չզլանայ հասցնելու իւր կարողութեան չափ մի չնչին գումար, որով կարելի լինի վերջացնել մեր այդ քաղցր սրբավայրը։ Նուիրատու պարոններն ու յարգելի տիկինները կարող են իրենց նուէրները հասցնել տեղիս գործակալ արժանապատիւ հայր Աբգարիոս Տէր-Յարութիւնեանցին։

—

Բ Ա Գ Ո Ի Ի Ց։—Այստեղ, ինչպէս յայտնի է, ապրութեան հրամանով պէտք է բացուէր առևտրական բիրժ. և արդէն նոյեմ. 21-ին առաջուց ընտրուած մի քանի անդամները ժողով կազմեցին քաղաքային խորհրդի դահլիճում և ընտրեցին միքանի—մակլերներ (դալլալներ)։ Իսկ նոյեմբ. 24-ին երեկոյեան միևնոյն դահլիճում սկսեցին հարցաքննել մակլերներին, որոնցից ընտրեցին արժանաւորներին։

—

Խմբագրութիւնս ստացաւ Ա. Կ. Պօլսում հրատարակուող «Ճաչակ ոսկեղէն դպրութեան» գրաբառ ամսաթերթի ԻԱ թիւը, նոյեմբերի տեսրը։ բովանդակութիւնն է 1) Պատմութիւն հայ լեզուի, 2) Երկնաւոր կարմրութիւնք.—Հաւատալ անծանաց, 3) Ի գրոց Տելեմաքայ.—Գեղօն անակրկնեան.—Առաձին բանք հայերէն լեզուի։

Տետրը կազմուած է 8 փոքրագիր թերթերից։

Բ. Կ. Պօլսում հրատարակուող «Խիկար» անունով երգիծաբան ամսագրի օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամսատետրները։

«Խիկարը» զանազան պատճառներով դադարել էր հրատարակուելուց. բայց այժմ վերսին ոկսվում է դուրս գալ պ. Նշան Կ. Պէրպէրեանի հրատարակութեամբ։

Գ. Վենետիկում հրատարակուող «Բազմավէպ» եռամսեայ հանդէսը, որի բովանդակութիւնն է. 1) Մկրտիչ Էմինի յոբելեանը.—Կաթ. հայ. վարժարանը Կ. Պօլսում.—Յուցակ Բէռլինի արքայական մատենադարանի հայ ձեռագրաց.—Բացատրութիւն մի հայկական տառերու հնչման և գրութեան մասին.—Եօթներորդ ժողով Արևելագիտաց և հայկական աչխարհագրութիւն,—ուսումն Երասխայ ձորահովին և նորա երեք հին քաղաքաց վերայ, 2) Բանաստեղծութիւններ.—Մանրավէպք.—3) Ուղևորութիւն ի Պոմպէյ հնդկաց.—4) Պատմութիւն Եգիպտոսի առ փարաւոնաք.—Նորատիպ Մատեանք։

—

Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ Ց Ի Ց։—Մեր գիւղի ուսումնարանը բացուած է ճեմարանի ուսանողների չնորհիւ, որոնք ձրիաբար ծառայում են այստեղ, և միևնոյն ժամանակ էլ պաշտօն ունին ճեմարանում Պ. Մանդինեանի ղեկավարութեամբ ճեմարանի ուսանողները գիւղի ուսումնարանում փորձնական դասեր ևս աւանդում են։

Ձարտարապետ է հրաւիրուած մայր եկեղեցու թէ դուրսը և թէ ներսը նորոգելու համար։ Գարնանը թէ կը ոկսուի և թէ ի կատար կածուի։ դրա համար հարկաւոր պատրաստութիւնները տեսնում են։

—

Ղ Ա Զ Ա Ն Ի Ց (պարսկական քաղաք)։—Պարսկաստանը չնորհիւ գերմանացի սպաների՝ օրից օր եւրոպական կարգ ու կանոնի մէջ է մտնում. վերնափառ Շահի հրամանով վերացուեցան այն առանձին արտօնութիւնները, որ ունէին տեղիս զարաֆները (մինչև օրս զարաֆները արտօնութիւն ունէին փող կտրելու իրենց ֆիրմայի տակ, որը և գործածվում էր թէ իրենց նահանգում և թէ չրջակայքում), նոյնպէս հաստատուեցան հաչտարար առեանները և ոստիկանութիւն և նոյնպէս էլ սկսուեց ժողովրդական վիճակագրութիւն, որ մինչև այժմ չեղած բան է։ Վերջին կարգադրութիւններից պէտք է յիշել նաև ակցիզը, որ դրուած է ամեն տեսակ բերքերի վերայ, թէև տակաւին չէ ներմուծուած ամեն տեղ։

—

Ա Ս Խ Ա Բ Ա Դ Ի Ց։— Լուր է տարածուած, իբր թէ պարսկական կառավարութիւնը արգիլելու է իւր երկրից ալիւր ու ցորեն արտահանելու դէպի Անդրկասպեան երկիրները։

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

—

Հայ մանկավարժական գործով զբաղուող մարդը, որքան էլ իր սեղանի երեսին մայրենի և օտար լեզուներով ընթերցանելի գրքեր ունեցած լինի, անշուշտ զգացած է այդ բոլորի անզօրութիւնը իր ծարաւը յագեցնելու։ կարող եմ ասել, թէ ուր էլ դիմում է հայը, եւրոպական որ էլ նշանաւոր հեղինակի երկը ձեռն է առնում, որքան էլ հիանում է Պեստալոցցու, Դիստերվեգի, Ցիլլերի, Սպենսերի և ուրիշների ստեղծագործութիւններով, այնուամենայնիւ կարծես հոգին մի այլ բանի է ձգտում, կարծես նրա մէջ մի վիհ կայ, որը անկարող են լցնել օտարի աշխատութիւնները, օտար մտքի արդիւնքը։

Հայ դպրոցի մտածող ուսուցիչը ընկնելով օտար գրականութեան գիրկը, յաճախ հանում է այն դառն, բայց շատ բնական եզրակացութեան, որ իւր չբջապատող հասարակութեան բնաւորութիւնը չէ փայլում այդտեղ։ Նա քաղելով օտար գրականութիւնից ընդհանուր դրութիւններ, տեսնում է՝ որ դրանք շատ աննչան կապ ունին իւր ազգի պայմանների հետ։

Խորին ուշադրութեան արժանի է մեր ներկայ մանկավարժական գործի դրութիւնը, որ համարձակ կարելի է ասել, չէ հիմնուած գիտութեան տեսութեան և գործնականութեան փոխադարձականութեան վերայ։ Երբ ազգային կեանքի մէջ մարմնանում է ուսումնարանական գործը, նրա գրականութեան մէջ էլ ծնունդ է առնում և աճում մանկավարժական ճիւղը։ Ինչ դրութեան մէջ էլ գտնուէր դպրոցը, նրա գործունէութիւնը մանկավարժութեան քննաքանութեան բովից անցնելու կարօտ է։ Որքան էլ համեստ լինի դպրոցի մանկավարժական իդէալը, նա մեծ խնամքի և մշակութեան կարիք ունի, մշակութիւն, որ պէտք է զուգընթացաբար առաջ ընթանայ ժողովրդի բարոյական պահանջների բազմանալուն հետ, իսկ այդ պահանջները բարդուում են ժողովրդի անցեալ ու ներկայ կեանքի պայմանների ազդեցութեան ներքոյ։ Այդ իսկ պատճառով նախ քան օտար գրականութիւնից գիտական զանազան տեսութիւնների գործադրութիւնը դպրոցի մէջ մտցնելը, հարկաւոր է մի լուրջ և խոհեմ հայեացք ձգել այդ պահանջների վերայ։ Մանկավարժութեան ընդհանուր գրականութեան մէջ հեշտաւոր գրողները մեզ համար գիւն ունին որպէս գիտնականներ, որպէս պատմական անձնաւորութիւններ։ Հայ դպրոցի ուսուցիչը լոկ նրանց ստացուի առաջնորդուելով միշտ բացասական հետևանքի կը հասնի։ Ճշմարիտ է, նրանց երկերը ուսումնասիրելը ամեն մի ուսուցչի սրբազան պարտքն է, բայց կարևոր է ճանաչել ազգի լուսաւորութեան պատմական ընթացումն, նրա դպրոցական գործի ժամանակակից պայմանները։ Ահա այն նշանաւոր խնդիրները, որոնք մշտապէս հետաքրքրում են ժողովրդական դպրոցի ուսուցչին, և որքան նա իւր մտաւոր աշխատութիւններով աւելի խորերն է թափանցել այդ խնդիրների, այնքան աւելել հաստատուն հողի վերայ է կանգնած։

Սակայն անհատական ուժերի անզօրութիւնը այդպիսի բարդ և բազմակողմանի խնդիրների առաջ ակնյայտն է։ Այդպիսի խնդիրների վերայ բազմակողմանի քննական հայեացք ձգելը կարօտ է աւելի նշանաւոր և յողնակի ուժերի։ Ահա մի նշանաւոր բաց տեղ մեր գրականութեան մէջ։

Ահա որտեղից է ծագում մի մանկավարժական ամսագրի օրէցօր աւելի և աւելի զգալի կարիքը։

Այո, անհրաժեշտ է մի մանկավարժական ամսագիր, որ իրեն նուիրէր մի կողմից տեսական մանկավարժութեան զանազան խնդիրներին, միւս կողմից նրա գործնականութեանը, ազգային զարգացի ներկային, անցեալին և ապագային։

Ի նկատի առնելով այն կարճ ժամանակամիջոցը, որի ընթացքում մի քանի այդպիսի թերթեր իրար ետևից աստղերի պէս երևացին մեր գրականութեան երկնակամարի վերայ և իսկոյն անյայտացան նիւթական սուղ գրութեան պատճառով, դուցէ չատերը կը զարմանան՝ որ ես վստահանում եմ մի այդպիսի հարց բարձրացնել։ Եւ իրաւունք էլ ունին, քանի որ նոյն իսկ մեր առօրեայ խնդիրներին և գրականութեանը նուիրուած պարբերական մամուլը չատ խախուտ հիմքի վերայ է կանգնած, լինելով վերջին ծայր անապահով գրութեան մէջ գրական կողմից։ Միւս կողմից դեռ երկչէ միւս օրն էր, որ «Արարատը» և «Մանկավարժանոցը» համարեա իրենց օրրանի մէջ խեղդուելան։ Բայց և մենք այս խնդիրը չենք բարձրացնում՝ խօսած լինելու կամ լոկ խնդիր բարձրացրած լինելու համար։ Մանկավարժական թերթի հրատարակութեան համար մենք մեր կողմից կառաջարկենք հետևեալը, դարձնելով նրանց վերայ ձեռնհաս անձանց ուշադրութիւնը։

Կարծում ենք որ բարձր. հոգևոր իշխանութիւնը նպատակայարմար գործ կատարած կը լինի ձեռնարկելով մի մանկավարժական թերթի հրատարակութեանը (մեկուշ որպէս յաւելուած «Արարատ» ամսագրի)։ Էջմիածինը այդպիսի մի թերթ հրատարակելու համար ունի բոլոր կարևոր պայմանները։ Այդտեղ են կեդրոնացած հայ դպրոցական գործի թարմ և նշանաւոր ուժերը, որ և թերթի լաւ խմբագրութեան առհաւատչեայն է։ Մնում է ամենագլխաւորը՝ բաժանորդների խընդիրը։

Մի քանի տարի առաջ դպրոցների հոգաբարձութիւնները հայ ուսուցիչների ամսականից հանում էին յօգուտ դպրոցի կոպէկագրած աստած փողը՝ իւրաքանչիւր մի րուբլուց—երկաւ կոպէկ։ Այդ սովորութիւնը այժմ համարեա վերացած է։ Էջմիածինը կարող է հրամայագրել բոլոր հոգաբարձութիւններին, որ ուսուցիչների տարեկան ռոճկի կոպէկագրաւմբն (2%) միանուագ տարւայ սկզբում ուղարկուի իրեն. իսկ հոգաբարձութիւնը ինքը իւր հերթում ամէն միս գումար կը գայ ամսական ռոճկիներից, որ քաղցրութեան անգիալի կը լինի ուսուցչին։

Հաստատապէս կարող ենք ասել, որ ուսուցչի համար ոչինչ նշանակութիւն չունի այդ բացի այն մեծ բարոյական օգուտը, որ քաղելու է նրանից ընդհանուր հասարակութիւնից։ Վերջի գիւղական ուսուցչութիւնը ստանում է 300 րուբլի, որի կոպէկագրաւմից գոյացած 6 րուբլին կը լինի մանկավարժական թերթի բաժանորդագինը։ Բայց կան վարժապետներ և վարժուհիներ, որոնք ստանում են աւելի, դէպքը 860 րուբլի ռոճիկ, որից կը գոյանայ 16 րուբլի։ Այդպիսիների համար Էջմիածնի տպարանական յանձնաժողովը կարող է ուղարկել զանազան տեսակ գրքեր, որոնց արժէքը լրացնէր բաժանորդագնից աւել փողը։ Ինչ ասել կուզի, որ այս էլ ունի իւր մեծ և նշանաւոր օգուտը։ Մի քանի տարիների ընթացքում այսպիսով հայ ուսուցիչը կարող է ունենալ մի սեփական համեստ մատենադարան։

Օրիորդաց և տղայոց դպրոցական վարչութիւնները էլ կարող են պարտաւորապէս ստանալ մի մի թերթ։ Այս միջոցներով էջմիածնում հրատարակուղ մանկավարժական թերթը կունենայ տարէկան ութից մինչև տասն հազար րուբլի եկամուտ։

Հրաւիրում ենք մամուլի և մասնաւորապէս «Արարատի» յարգելի խմբագրութեան ուշադրութիւնը այս հարցի վերայ։

Յ. Ձազարբէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—Թուղարական կառավարիչների տրամադրութիւնը որոշում են հետևեալ «Köln. Zeit»-ի ստացած հեռագրով. «Նոյեմբերի 21 ին Յանկօվը ուրիշի միջոցով համաձայնութիւն յայտնեց կազմուելիք խառն մինիստրութեան մասնակցելու։ Խնամակալները այդ բանին պատասխանեցին, որ Տըրնօվօյում կարծելով թէ Եւրոպան երեսի վերայ է թողել իրենց, նրանք տրամադրը էին խառն մինիստրութիւն կազմելու, բայց այժմ բացարձակապէս մերժում են ա և իցէ համաձայնութիւն կազմելու ցանկութեան հետ։ Սամբուլովը օգտուելով այս հանգամանքից, կարավելովին և Յանկօվին խորհուրդ է տուել, որ զգոյշ կեցան ա և իցէ խարդախանքներից, ապա թէ ոչ հակառակ դէպքում, սոֆիական կառավարութիւնը առանց այլ և այլութեան դուրս կանչ նրանց իշխանութեան սահմաններից»։

—«Nord»-ը Ռուսիայի վերջնական նպատակների մասին արևելքում ասում է։ «Յանկանալով իւր հարաւային ծովալները ապահովել, Ռուսիան չուզ է անում, որ փակեն նեղուցները (Դարդանելի և Կ.-Պօլսի)։ Նա կարող չէ թոյլ տալ, որ Սեւաստապօլը և Օդեսան միան թշնամու առաջ բաց։ Սև ծովը ապահովելու համար, սակայն, հարկաւոր չէ, որ անպատճառ Ռուսիան տիրէ Կ. Պօլսին, դրա համար բաւական է, եթէ Թիւրքիան մի ուրիշ մեծ պետութեան հետ խօսք կտայ Դարդանելը փակելու»։

—Վաշինգտոնում (Միացեալ-Նահանգներում) նոյեմբերի 26-ին բացուեցան կոնգրէսի նստերը (ազգային ժողով)։ Այդ առթիւ հասարակապետութեան նախագահի յայտարարութեան մէջ ամեն կողմից Միացեալ-Նահանգների դրութիւնը լաւ է նկարագրուած. բոլոր պետութիւնների հետ յարաբերութիւնները էլ լաւ են. տէրութեան մուտքը նախանձելի է, այնպէս որ, այս տարի, պետական գանձարանում մնում է 104 միլիոն դօլլար աւելորդ փող։

—«Politische Correspondenz» ում կարդում ենք, որ Դանիայի կառավարութիւնը մտադիր է զօրքի թիւը մինչի 12 հազար աւելացնելու և մեծ մարտկոցներ ձեռք բերելու։ Նոյնպէս հաղորդում են, որ արդէն սկսել են կօպէնհագէնը ամրացնել, չնայելով, որ դանիական պարլամենտը մերժել էր դրա համար միջոցներ տալու։ Բանը նրանումն է, որ չինութիւնը կատարվում է միմիայն Եւտրապի ստորագրութեամբ հաւաքած փողերով։

—«National Zeitung»-ի ասելով, չինական կառավարութիւնն ամենևին նուաճողական ուղղութիւն չունի, նա աշխատում է, որ իւր ունեցած հողերը իւր ձեռքում պահի։ Այդ կողմից նա չատ վախենում է Ռուսիայից, որը իբր թէ Մանջուրայի կողմից նեղում է Չինաստանին, ուստի այդ բանի առաջն առնելու համար, Չինաստանը պարում էր դաշնակիցներ։ Անգլիան այդ բանից օգտուելով, թէև Չինում դաշն կապեց Չինաստանի հետ, որի զօրութեամբ Չինաստանը պարտաւորվում է Անգլիայի դէմ դժուարութիւններ չյարուցանելու, եթէ վերջինս սկսի Բիրմանիան վերջնականապէս խաղաղացնել, բայց Անգլիան էլ պարտաւորվում է իւր կողմից և խոստանում է չինական նաւատորմիղը կազմակերպել անգլիականի օրինակին—միասին կռուելու համար։ Այստեղ խօսք է եղել և Համիլտոն-ծովային կայարանի մասին։ Չինաստանը թէև յայտնապէս չէ համաձայնել, բայց լռելիայն ընդունել է Անգլիայի տիրապետութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վիրգօտների բժիշկները. Վիրգօտների-Հին գերմանական ժողովրդի մէջ, որոնք ապրերի մեծ գաղթականութեան միջոցին Պանուր գետից մինչի Կարպատեան լեռները զօրեղ պետութիւն էին հիմնել և որ յետոյ Սպանիայում էլ տիրապետող դարձան, բժիշկները նախապէս հիւանդի կամ հիւանդի տերերի հետ պայմանաւորում էին բժշկութեան համար տալու վարձատրութեան մասին. եթէ հիւանդը մեռնում էր, այն ժամանակ բժիշկը չէր ստանում իւր վարձը և նրա աշխատանքը կորչում էր զուր. եթէ արիւն թողնելիս հիւանդին ա և իցէ մարմնական վնաս հասցնէին՝ առանձին տուգանք էին վճարում, իսկ եթէ հիւանդը մեռնում էր արիւն թողնելուց յետոյ անմիջապէս, այն ժամանակ ժողովրդական դատաստանը բժշկին յանձնում էր մեռնողի ազգականների լիազօր իշխանութեան, որոնք կարող էին նրան պատժել, ինչպէս որ իրենք կը կամենային,—բայց այդ միայն այն դէպքում, երբ մեռնողը ազատ մարդ էր, իսկ եթէ նա ստրուկ կամ վիրգոների նուաճած ազգերից էր, այն ժամանակ բժիշկը ազատվում էր, կամ միայն փոդ վճարելով և կամ ստրուկի տեղ տիրոջ մի ուրիշ ստրուկ տալով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍՕԱՑԻՆ ԳԱՐՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 Դեկեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Սենատի վճռաբեկին դեպարտամենտի դիտողութեան է ներկայացրած հետևեալ հարցը. կարող են հաշտարար դատաւորները անբարեխիղճ համարել մեղադրանքը, եթէ մեղադրուլը պաշտօնական տար է։

ՍՕՖԻՈ. Գադբան էֆենդին առանձին հրամանագրով պահանջեց որ այստեղի լրագիրները դադարեցնեն, որովհետև նրանք իշխան Ալեքսանդրի կրկին ընտրութեան կողմն են և Մինգրելիայի իշխանի կանդիդատութեան դէմ են։

4 Դեկեմբերի

ԼՕՆԴՕՆ. Եգիպտոսը գրուող զօրքը մասդրութիւն կայ հինգ գունդի իջեցնելու։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ. Օտար պետութեան օժանդակութեամբ դանիական բանակը ուժեղացնելու և ամրութիւնները զօրացնելու լրագրական լուրը ճշմարիտ չէ. նախագծւում է միայն մի քանի ամրութիւններ ամրացնելու և որովհետև այդ բանի համար հարկաւոր գումարը 5 կամ 7 տարուայ պէտի բաժանուի, ուստի այդ միջոցները չպէտք է պատերազմի նախապատրաստութիւն համարել։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՕՖԷ ՄՕԿԿՕ

Ս. ՍՒՈՒ ԵԻ ԸՆԿ.

(Ц. 4707) 51—41

ՓՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱՏԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵԻ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէլլի և Բաթումի մէջ։

Շորեքշաբթի, դեկտեմբերի 10-ին, «ՍԱՐՄԵՆԻԱ» (Arménie) շոգենաւը, նաւապետ «ՇԷՕԼՏ» (Scheult) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օդեսա, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէլլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին, Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՈՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԻՆՕՒՆ, նախկին գրչէչյա Արծրունիների № 103. 4—3

ԼՈՋԵ ՏԵՄԱՔ

Պ. Միքայել Պետրոսեան ՍԱՓԱՐԵԱՆՑԻ հրատարակած և Գ. ՏԷՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆԻ և Գ. ՄՈՒՐԱԴԵԱՆԻ կազմած

ՀԱՆՐԱՀԱՇՈՒԻ (ԱԼԳԵԲՐԱ)

դասագիրքը, որ բաղկացած է 440 երեսներից և ամփոփում է իւր մէջ և խնդիրների հաւաքածուն։ Գրքի գինն է 1 ր. 60 կ., վաճառվում է Թիֆլիսում, Միքայելեան կամուրջի վերայ, պ. Տէր-Ղուկասեանի մատնեֆակտուրային խանութում, №№35, 36։ Օտարաքաղաքացիները կարող են գիմել այս հասցէով. Въ Тифлисъ, на Михайловскомъ мосту, въ магазинѣ Теръ-Гукасяна—съ передачею Георгію Теръ-Гукасяну.

10—8

Дозволено цензурою. Тифлисъ, 4-го Декабря 1886 г. Տպարան Մ. Գ. Օտինեանց Типографія М Д. Ротиніанцъ Гол. пр., д. № 41